ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

26-ը փետրվարի 2021թ. քաղ. Երևան

Նախագահությամբ՝ Կ. Հովհաննիսյանի

անդամներ՝ Ռ. Սինոյան
Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

ՕՐԱԿԱՐԳ

1. 19/02/21թ. «Նորավանք»-«Շիրակ-2» (ԱԽ031) խաղին՝ «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանի (N 25001) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

2. 21/02/21թ. «Արարատ»-«ՈՒրարտու» (ԲԽ030) խաղին՝ «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մալաքյանի (N 3539) հեռացման մասին (մրցակցին հայհոյելու համար).

3. 24/02/21թ. «Լոռի ՖԱ»-«Ալաշկերտ» (ԲԽ034) խաղին՝ «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Դավիդ Դավիդյանի (N 31830) հեռացման մասին (շատ կոպիտ խախտում).

4. 24/02/21թ. «Լոռի ՖԱ»-«Ալաշկերտ» (ԲԽ034) խաղի մասին.
1. Մարզադաշտի լուսատախտակը տեխնիկական խնդիրների պատճառով խափանվել էր, որն ըստ դաշտի տեր թիմի ներկայացուցչի՝ կապված էր մի քանի օր շարունակ տեղացած ձյան հետ, որից լուսատախտակը վնասվել էր: Խաղն անցել է առանց լուսատախտակ, մարզադաշտում չկար փոխարինող մեխանիկական լուսատախտակի հարմարանք:
2.Մարզադաշտի նախախաղային ստուգման ժամանակ հայտնաբերվել էր թերություն՝ կապված դարպասային ցանցերի հետ, որոնցից մեկը տեղ-տեղ ուներ վնասված մասեր, ինչի մասին տեղեկացվել էր դաշտի տեր ակումբի ներկայացուցիչը: Խաղի մեկնարկից առաջ նշված թերությունն ամբողջովին շտկված չի եղել, դարպասացանցի վրա առկա թերությունները ուղղվել են խաղի մեկնարկից անմիջապես առաջ, մրցավարի օգնականի ստուգման ժամանակ: Դրա հետևանքով խաղի մեկնարկը ուշացել է 3 րոպեով՝ նախատեսված 14:00-ի փոխարեն մեկնարկելով 14:03-ին:

5. 22/02/21թ. «Արարատ-2»-«ԲԿՄԱ» (ԱԽ015) խաղի մասին.
Բացակայում էր հաշիվը ցույց տվող ցուցատախտակը, իսկ էլեկտրոնային լուսատախտակը չէր աշխատում: Դաշտի տեր թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների հետնամասում բացակայում էին ազգանունները:

6. 25/02/21թ. «Փյունիկ»-«ՈՒրարտու» (ԳԽ011) խաղին՝ «ՈՒրարտու» թիմի ֆուտբոլիստ Էդգար Գրիգորյանի (N 11880) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

7. 07/02/21թ. «Քարվանսարա ֆզ»-«Ալաշկերտ ֆզ» (ՖԶ096) խաղին՝ «Ալաշկերտ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արման Սաֆարյանի (N 29388) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

8. 21/02/21թ. «Լուսառատ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ069) խաղի մասին.
Խաղի 9-րդ րոպեին «Լուսառատ» թիմի դարպասապահ Սերգեյ Սարգսյանը, ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար պատժվեց կարմիր քարտով, դրանից հետո թիմի գլխավոր մարզիչ Արա Նիգոյանը թիմին հրահանգեց դուրս գալ խաղահրապարակից և այլևս չշարունակել խաղը: «Լուսառատ» թիմը հեռացավ՝ խաղը թողնելով անավարտ:

9. 17/02/21թ. «Վան ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖԶ062) խաղի մասին.
«Վան ֆզ» թիմի չներկայանալու պատճառով խաղը չի կայացել:

10. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի ծառայողական գրության քննարկում. Ալաշկերտ ՖԱ-ն հրաժարվել է ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի 2020-2021թթ. հետագա մասնակցությունից:
11. 21/02/21թ. «Լուսառատ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ069) խաղին՝ «Լուսառատ» թիմի ֆուտբոլիստ Վարդան Գևորգյանի (N 1240) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

12. 21/02/21թ. «Լուսառատ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ069) խաղին՝ «Լուսառատ» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ Սարգսյանի (N 4046) հեռացման մասին (ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար).

Հարց. 1

ՈՐՈՇՈՒՄ.

1. 19/02/21թ. «Նորավանք»-«Շիրակ-2» (ԱԽ031) խաղին՝ «Շիրակ-2» թիմի ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանի (N 25001) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանին որակազրկել 1 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 2

ՈՐՈՇՈՒՄ.

2. 21/02/21թ. «Արարատ»-«ՈՒրարտու» (ԲԽ030) խաղին «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մալաքյանի (N 3539) հեռացման (մրցակցին հայհոյելու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Էդգար Մալաքյանին որակազրկել 2 խաղով, «Արարատ» ՖԱ-ին տուգանել 250000 դրամի չափով:

Հարց. 3

ՈՐՈՇՈՒՄ.

3. 24/02/21թ. «Լոռի ՖԱ»-«Ալաշկերտ» (ԲԽ034) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Դավիդ Դավիդյանի (N 31830) հեռացման (շատ կոպիտ խախման) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Դավիդ Դավիդյանին որակազրկել 2 խաղով, «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 100000 դրամի չափով։

Հարց. 4

ՈՐՈՇՈՒՄ.

4. 24/02/21թ. «Լոռի ՖԱ»-«Ալաշկերտ» (ԲԽ034) խաղին.

1. Մարզադաշտի լուսատախտակը տեխնիկական խնդիրների պատճառով չաշխատելու,

2. նախախաղային ստուգման ժամանակ հայտնաբերված թերությունները չվերացնելու, ինչի հետևանքով խաղի մեկնարկը 3 րոպե ուշ սկսելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ Վանաձորի ֆուտբոլի ակադեմիա ՀԿ-ին տուգանել 20000 դրամի չափով։

Հարց. 5

ՈՐՈՇՈՒՄ.

5. 22/02/21թ. «Արարատ-2»-«ԲԿՄԱ» (ԱԽ015) խաղին՝ հաշիվը ցույց տվող ցուցատախտակը բացակայելու, «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների հետնամասում ազգանունները բացակայելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 59-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 60000 դրամի չափով։

Հարց. 6

ՈՐՈՇՈՒՄ.

6. 25/02/21թ. «Փյունիկ»-«ՈՒրարտու» (ԳԽ011) խաղին՝ «ՈՒրարտու» թիմի ֆուտբոլիստ Էդգար Գրիգորյանի (N 11880) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Էդգար Գրիգորյանին որակազրկել 1 խաղով, ՖԱ Ուրարտու ՄՀԿ-ին տուգանել 25000 դրամի չափով։

Հարց. 7

ՈՐՈՇՈՒՄ.

7. 07/02/21թ. «Քարվանսարա ֆզ»-«Ալաշկերտ ֆզ» (ՖԶ096) խաղին՝ «Ալաշկերտ ֆզ» թիմի ֆուտբոլիստ Արման Սաֆարյանի (N 29388) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 41-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Արման Սաֆարյանին որակազրկել 1 խաղով, «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 7000 դրամի չափով։

Հարց. 8

ՈՐՈՇՈՒՄ.

8. 21/02/21թ. «Լուսառատ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ069) խաղին (N 239) (Խաղի 9-րդ րոպեին մարզիչ Արա Նիգոյանի հորդորով «Լուսառատ» թիմի կողմից խաղադաշտն ինքնակամ լքելու և հանդիպումը չշարունակելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 40-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝«Լուսառատ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:5 հաշվով, մարզիչ Արա Նիգոյանին որակազրկել մինչև 20/03/2021թ. ներառյալ, «Լուսառատ» ՖԱ ՀԿ-ին տուգանել 70000 դրամի չափով:

Հարց. 9

ՈՐՈՇՈՒՄ.

9. 17/02/21թ. «Վան ֆզ»-«Վեստ Արմենիա ֆզ» (ՖԶ062) խաղին՝ «Վան ֆզ» թիմը խաղին չներկայանալու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 40-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝«Վան ֆզ» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:5 հաշվով, «ՖԱ Վան ՀԿ»-ին տուգանել 50000 դրամի չափով:

Հարց. 10

ՈՐՈՇՈՒՄ.

10. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի ծառայողական գրության քննարկում. «Ալաշկերտ» ՖԱ-ի ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի 2020-2021թթ. հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի 40-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ ֆզ» թիմին հանել ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնությունից, «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 500000 դրամի չափով:

Հարց. 11

ՈՐՈՇՈՒՄ.

11. 21/02/21թ. «Լուսառատ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ069) խաղին՝ «Լուսառատ» թիմի ֆուտբոլիստ Վարդան Գևորգյանի (N 1240) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 41-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Վարդան Գևորգյանին որակազրկել 1 խաղով, «Լուսառատ» ՖԱ ՀԿ-ին տուգանել 7000 դրամի չափով:

Հարց. 12

ՈՐՈՇՈՒՄ.

12. 21/02/21թ. «Լուսառատ»-«Արարատ-Արմենիա-ֆզ» (ՖԶ069) խաղին՝ «Լուսառատ» թիմի ֆուտբոլիստ Սերգեյ Սարգսյանի (N 4046) հեռացման (ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 41-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Սերգեյ Սարգսյանին որակազրկել 1 խաղով, «Լուսառատ» ՖԱ ՀԿ-ին տուգանել 10000 դրամի չափով:

ՆԱԽԱԳԱՀ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

   Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: